«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Բարդ ստորադասական նախադասության փոխակերպման առանձնահատկությունները և դրանց հաղթահարման ուղիները———————
ԱՌԱՐԿԱ	Հայոց Լեզու———————————————
ՀԵՂԻՆԱԿ	Քորդոլյան Անահիտ———————————
ՄԱՐԶ	Արմավիր———————————————
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Վաղարշապատի Երվ. Օտյանի անվան N7 հիմն. դպրոց———————————————

Բովանդակություն

Ներածություն……...2

Գլուխ 1. Բարդ ստորադասական նախադասություն……..…….3

1.1. Գերադաս և ստորադաս նախադասությունների շարադասությունը և կետադրությունը……4

Գլուխ 2. Բարդ ստորադասական նախադասության փոխակերպումը պարզի……6

2.1. Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունենում բարդ ստորադասական նախադասությունները փոխակերպելիս……..…6

Եզրակացություն…… ……13

Օգտագործված գրականության ցանկ…… . . ……16

Բարդ ստորադասական նախադասության փոխակերպման առանձնահատկությունները և դրանց հաղթահարման ուղիները

Ներածություն

Ժամանակակից կրթական համակարգում անհրաժեշտություն է առաջանում նորովի մոտեցում հանդես բերել լեզվի ուսուցման այս կամ այն իրողության վերաբերյալ:

Նոր տեխնոլոգիաները, համացանցը օգնում են զգալիորեն ընդլայնել ուսումնական նյութի որոնման, հաղորդման և յուրացման հնարավորությունները:

Մենք գիտենք, որ միևնույն մտքի արտահայտման տարբեր ձևեր են կիրառվում: Կան այնպիսի նախադասություններ, որոնց նույն միտքն արտահայտում են տարբեր լեզվամիջոցներով: Դրանք շարահյուսական հոմանիշներ են, և այդ շարահյուսական հոմանիշների կառուցվածքային իրողություններին գործնականորեն տեղյակ լինելը կնպաստի մտքերի արտահայտման բազմազանությանը: Սովորողը կկարողանա իր միտքն արտահայտել տարբեր ձևերով, լեզվական ճկունության շնորհիվ կխուսափի նախադասության նմանատիպ կառուցվածքային կրկնություններից և միօրինակությունից: Բայց և այնպես, ինչպես լեզվաբաններից շատերն են մատնանշում (Գ. Ջահուկյան «Ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքները», Երևան 1974թ.), փոխակերպումներն ինքնանպատակ չպետք է լինեն, քանի որ փոխակերպված տարբերակները երբեմն ոճական որոշակի անհարթություններ են ունենում, երբեմն էլ արհեստական են հնչում: Նրանք, շարահյուսական հոմանիշներ լինելով հանդերձ, ոճական միևնույն արժեքը չունեն:

Այս նյութն ուսուցանելիս պետք է դիմել ելակետային ստուգման միջոցին, որի նպատակն է բացահայտել աշակերտների հենակետային գիտելիքները, կարողություններն ու հմտությունները: Ուստի անհրաժեշտ է կատարել նախադասության շարահյուսական վերլուծություն, քանի որ նախադասությնան անդամների լավ իմացությամբ է պայմանավորված տվյալ ուսումնական նյութի խոր և կայուն յուրացումը սովորողների կողմից:

Գլուխ 1. Բարդ ստորադասական նախադասություն

Նախ պետք է հասկանալի լինի, թե ինչ է բարդ ստորադասական նախադասությունը, նրա կառուցվածքը, բաղադրիչների կապակցման եղանակները, երկրորդական նախադասության շարադասությունը և բարդ ստորադասական նախադասության կետադրությունը։

Ստորադասական է այն բարդ նախադասությունը, որի բաղադրիչ նախադասություններից մեկը կատարում է մյուսի որևէ անդամի դերը, այսինքն՝ քերականորեն կախված է մյուս նախադասություններից։

Բարդ ստորադասական նախադասության կազմում երկու կարգի բաղադրիչ նախադասություններ կան, որոնցից մեկը գլխավոր կամ գերադաս է, իսկ մյուսը (կամ մյուսները)՝ երկրորդական կամ ստորադաս։ Վերջինս գլխավոր նախադասության հետ կապակցվում է՝

ա) ստորադասական շաղկապներով (որ, թե, եթե, որպեսզի, որովհետև, թեկուզ, թեպետ, մինչև, մինչև որ, քանի որ, քանի դեռ, չնայած որ, մինչդեռ, և այլն),

բ) հարաբերական դերանուններով (ով, որ(ը), երբ, ինչ, ինչքան, ինչպիսի, ինչպես, որտեղ, ուր, ով որ, երբ որ, ինչքան որ, և այլն),

գ) շարահարությամբ, այսինքն՝ առանց շաղկապի կամ հարաբերական դերանվան, միայն հնչերանգով։

Բերենք համապատասխան օրինակներ.

- <u>Եթե</u> հայերեն գրեր, բնականաբար շատ կհարստացներ մեր լեզուն։ (Եթե - շաղկապ)
- Ես արդեն մանրամսն չեմ հիշում այն, <u>ինչ</u> գրել եմ Սարոյանին ուղղած իմ նամակում։ (Ինչ – հարաբերական դերանուն)
- Արդեն երրորդ օրն է՝ ուղտը չի ցանկանում ոտքի կանգնել և շարունակել ճանապարհը։ (<u>ինչ</u> հարաբերական դերանվան զեղչում կամ շարահարություն)։

Գերադաս և ստորադաս նախադասությունների շարադասությունը և կետադրությունը

Ստորադաս նախադասությունը գերադասի նկատմամբ կարող է լինել նախադաս, միջադաս, հետադաս։

Բերենք համապատասխան օրինակներ.

- Թեև դժվարին էր ճանապարհը, նրանց դեմքերին հոգնության նշույլ իսկ չկար։/նախադաս/
- Գաղթականներից նրանց, ովքեր կարողանում էին քայլել, խմբեցին ու ոտքով ուղարկեցին Կարս։ /միջադաս/
- Նրա ձին կարծես հպարտ է, որ իր մեջքին կրում է քաջարի այդ հսկային։/հետադաս/

Նախ պետք է կարողանանք տարբերել գերադաս և ստորադաս նախադասությունները, իսկ դրանք տարբերելու մի հստակ ձև կա. ստորադասական շաղկապները և հարաբերական դերանունները գտնվում են ստորադասական նախադասության կազմում։ Գլխավորը երկրորդականից տարբերակելն անհրաժեշտ է, որովհետև փոխակերպման ենթարկվում է երկրորդական նախադասությունը, թեև գլխավորի մեջ էլ որոշակի փոփոխություններ են տեղի ունենում։

Այսպիսով, առաջին նախադասությունը սկսվում է թեև շաղկապով, ուրեմն հենց դրանով է պայմանավորված նրա նախադաս լինելը։ Երկրորդ նախադասության մեջ ստորադաս նախադասությունը գտնվում է գլխավորի մեջ, միջադաս է և կապակցված է ովքեր հարաբերական դերանվամբ, ուստի երկու կողմից անջատվում է ստորակետով։ Երրորդ նախադասության ստորդաս նախադասությունը գտնվում է վերջում, կապակցվում է որ ստորադասական շաղկապով։

Այստեղ ևս մի դիտարկում կարելի է անել։ Աշակերտները հաճախ դժվարանում են որ ստորադասական շաղկապը տարբերել որ հարաբերական դերանունից։ Տարբերակման հիմնական միջոցը **ը** որոշիչ հոդն ավելացնելն է. եթե հոդ ստացավ, հոլովվեց կամ հոգնակի գործածվեց (որը, որոնք), ուրեմն՝ որը հարաբերական դերանուն է, իսկ եթե հոդ չստացավ, ապա շաղկապ է։ Քանի որ շաղկապը չթեքվող խոսքի մաս է, ուստի որոշիչ հոդ ստանալ կամ հոլովվել չի կարող։

Այսպես օրինակ՝

- Միքայելը զգում էր, որ իր սրտում օրեցօր զարգանում էր ատելության զգացում մեծ եղբոր՝ Սմբատի նկատմամբ։ (որ – ստորդասական շաղկապ)
- Իսկապես, ի՞նչ պատասխանես այն մարդուն, որ պատկերացում չունի գրողի աշխատանքի մասին։ (որ – հարաբերական դերանուն)

Ինչպես տեսանք, բոլոր ստորադասական շաղկապների կամ հարաբերական դերանունների առկայությամբ գլխավորը երկրորդականից անջատվում է ստորակետով, միջադասի դեպքում՝ երկու կողմից ստորակետով։

Ամփոփելով մեր միտքը՝ կարող ենք ասել, որ երկրորդական նախադասությունը գլխավորից անջատվում է ստորակետով, եթե շաղկապի զեղչում չկա։ Օրինակ՝

- Մի օր էլ նա հայտնեց, թե իրենք Արևմտյան Խորհուրդ ստեղծելու մտադրություն ունեն։
- Շուշանին դուր էր գալիս, որ իր ծանոթ ենթասպան հուզված է։

Շաղկապի զեղչման դեպքում առաջադաս կամ վերջադաս երկրորդական նախադասությունը գլխավորից անջատվում է բութով։ Օրինակ՝

- Որոշել էին՝ ձիերը հանձնեն Երևանի կայազորի պետին։
- Արքան հարցրեց՝ որտեղ են համհարզները։

Մտովի կարող ենք վերականգնել որ և թե շաղկապները, որոնց զեղչման դեպքում բութ է դրվել։

Գլուխ 2. Բարդ ստորադասական նախադասության փոխակերպումը պարզի

Բարդ ստորադասական նախադասությունը պարզի փոխակերպելիս պետք է հիշել, որ երկրորդական նախադասությունը և նրա փոխակերպված տարբերակը պետք է ունենան շարահյուսական միևնույն պաշտոնը, այսինքն՝ ենթակայի, որոշչի, խնդրի, պարագայի և այլ պաշտոններ կատարող երկրորդական նախադասությունները փոխակերպման ժամանակ վերածվում են համապատասխանաբար նույն պաշտոնները կատարող դերբայական դարձվածների կամ անվանական բառակապակցությունների։

Համեմատելով բարդ ստորադասական նախադասություններն իրենց պարզեցված ձևերի հետ՝ կարելի է հաստատել, որ դրանք ոչ միայն կառուցվածքով, այլև մտքի արտահայտման ձևով նույնը չեն, ոճական նուրբ տարբերություններ ունեն։ «Դրանք հոմանիշային կառուցվածքներ են, - գրում է ակադեմիկոս Գ. Ջահուկյանը, - հայոց լեզվամտածողության դրսևորման երկու տարբեր ձևեր, որոնք իրարից անկախ և իրար կողքի հավասարապես գոյակցվում են լեզվում և չեն բացառում մեկը մյուսին։ Նայած հեղինակային նախասիրությանը, հաճախ խոսքային իրադրությունից ելնելով՝ հոմանիշային զուգահեռ այդ ձևերից մերթ մեկն է կիրառվում, մերթ՝ մյուսը»։ («Ժամանակակից Հայոց լեզվի տեսության հիմունքները», Երևան 1974, էջ 535)

Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունենում բարդ ստորադասական նախադասությունները փոխակերպելիս

Բարդ ստորադասական նախադասությունները փոխակերպելիս հարկավոր է կատարել հետևյալը.

1. Որոշել գերադաս և ստորադաս նախադասությունները։
2. Որոշել ստորադաս նախադասության բնույթը՝ պարզելով, թե գերադաս նախադասության որ անդամին է լրացնում։ Այս պարագայում սովորողներին պետք է հիշեցնել, որ գերադաս նախադասության մեջ առկա ցուցական դերանունները (այն, այնքան, այնպես, այնպիսի,

այնտեղ, նա), որոնք հարաբերյալներ են, հնարավորություն են տալիս որոշելու ստորադաս նախադասության բնույթը և տեղը գերադաս նախադասության մեջ։

ա)Ստորադասական շաղկապով կապակցված ստորադաս նախադասությունները լրացնում են գերադաս նախադասության որևէ բայական անդամի։ Օրինակ՝

Կես ժամ հետո մենք <u>այնքան</u> էինք հեռացել, որ լեռան ուրվագծերը չէինք նշմարում։ (չափ ու քանակի պարագա)

բ) Հարաբերական դերանուններով կապակցված ստորադաս նախադասությունները մեծ մասամբ լրացնում են գերադաս նախադասության գոյականական որևէ անդամի։ Օրինակ՝

Շուտով վերադարձան այն պատվիրակները, որ գնացել էին բանակցելու թշնամի զորապետի հետ։ (որոշիչ)

3. Վերացնել ստորադասական շաղկապները, հարաբերականները, գերադաս նախադասության մեջ եղած հարաբերյալները։
4. Ստորադասական նախադասության պարզ ստորոգյալը վերածել անկախ դերբայի, իսկ բաղադրյալ ստորոգյալի հանգույցը փոխարինել <u>լինել</u> բայով (կարող են փոխարինվել <u>դառնալ</u>, <u>թվալ</u>, <u>համարվել</u>, <u>կոչվել</u> վերացական իմաստ ունեցող բայերով) կամ դուրս բերել։ Օրինակ՝
   - *Ցուցում է եղել, որ շենքի ցուցանակը վաղը ևեթ <u>փոխեն</u>։ // Ցուցում է եղել շենքի ցուցանակը վաղը ևեթ <u>փոխելու</u> մասին։*
   - *Քչերը հավանաբար գիտեին, որ այդ ամենը <u>մտացածին է</u>։ // Քչերը հավանաբար գիտեին այդ ամենի <u>մտացածին լինելը</u>։*

Վերոնշյալ նախադասություններից առաջինում <u>փոխեն</u> պարզ ստորոգյալը վերածվել է <u>փոխելու</u> (անորոշ դերբայ, տրական հոլով), իսկ երկրորդում <u>մտացածին է</u> բաղադրյալ ստորոգյալի հանգույցը <u>վեր է ածվել</u> լինել վերացական բայի։

Եթե ստորադասական նախադասության ստորոգյալն արտահայտված է անկատար ձևաբայով, փոխակերպման ժամանակ վերածվում է ենթակայական դերբայի, իսկ վաղակատռարը՝ հարակատար դերբայի։

Փախչում է – փախչող

Փախել է – փախած

5. Երկրորդական նախադասության ենթական վերածվում է կողմնակի ենթակայի, որը դրվում է սեռական հոլովով, եթե ենթական անձ է կամ անձի առումով վերցված իր։ Օրինակ՝ Գաբրիելը չէր թաքցնում, որ <u>ինքը</u> կապված է ինչ-որ կասկածելի անձանց հետ // Գաբրիելը չէր թաքցնում <u>իր</u> կապված լինելը ինչ-որ կասկածելի անձանց հետ։

   Այս դեպքում հիշեցնենք սովորողներին, որ երբ սեռական հոլովով փոխված ենթական տրոհվում է նախկին ստորոգյալ-դերբայից բառերով, բառակապակցություններով (գոյականի առկայությամբ), կողմնակի ենթակայի վրա դրվում է բութ։ Օրինակ՝ Ընթերցողը չի կարող ըմբռնել, որ <u>Կոմիտասը</u> շարքային դեմք չէ հայ մշակույթի պատմության մեջ։ // Ընթերցողը չի կարող ըմբռնել <u>Կոմիտասի</u>՝ հայ մշակույթի պատմության մեջ շարքային դեմք չլինելը։

   Այն դեպքերում, երբ երկրորդական նախադասության ենթական անձնանիշ գոյական չէ, մնում է անփոփոխ։ Օրինակ՝ Երբ <u>անձրևը</u> դադարեց, երեխաները վազեցին փողոց։ // <u>Անձրևը</u> դադարելուց հետո երեխաները վազեցին փողոց։

6. Փոխակերպելիս ստորադասական շաղկապներին ու հարաբերական դերանուններին փոխարինում են համապատասխան կապեր։

   Որ, որպեսզի շաղկապներով կապակցված ստորադասական նախադասության ստորոգյալը վերածվում է անորոշ դերբայի սեռական հոլովի և գործածվում **համար, նպատակով** կապերով կամ առանց կապերի։

   Օրինակ՝ Մայր արագիլը թռավ ճահճուտը, որ իր ձագերին կեր բերի։ // Մայր արագիլը թռավ ճահճուտը իր ձագերին կեր բերելու (համար)։ (Ունեցանք նպատակի պարագա ստորադասական նախադասություն)

   Որ շաղկապով կամ **որ** հարաբերական դերանունով կապակցված ստորադասական նախադասությունը կարող է իր բնույթով լինել նաև *ենթակա, ստորոգելի, որոշիչ, ուղիղ* և *անուղղակի խնդիրներ*։ Նման դեպքերում փոխակերպումը կատարվում է ստորադասական նախադասությանը տրված հարցի հիման վրա։ Օրինակ՝

   - Եվ պատահական չէր, որ նրա շեքսպիրյան բեմադրությունները արվեստի գլուխգործոցներ էին դառնում։ // Եվ պատահական չէր նրա շեքսպիրյան

բեմադրությունները արվեստի գլուխգործոցներ դառնալը (Ենթակա ստորադաս նախադասություն)

- Նրան ցույց տվեք, որ Դուք սուր միտք ունեք։ // Նրանք ցույց տվեք (**Ի՞նչ**) Ձեր սուր միտք ունենալը։ (Ուղիղ խնդիր ստորադասական նախադասություն)
- Սարոյանի բացառիկությունն այն էր, որ դարձավ իր հարազատ ժողովրդի ազգային մեծ գրողներից մեկը։ // Սարոյանի բացառիկությունը իր հարազատ ժողովրդի ազգային մեծ գրողներից մեկը դառնալն էր։ (Ստորոգելի ստորադաս նախադասություն)։
- Հրաման էին արձակել, որ հարձակումը երկու օրով հետաձգեն։ // Հրաման էին արձակել հարձակումը երկու օրով հետաձգելու մասին։ (վերաբերության անուղղակի խնդիր)
- Ծնվել է մի նոր ու խոշոր հայ բանաստեղծ, որ նորովի է ընկալում Հայաստանը։ // Ծնվել է Հայաստանը նորովի ընկալող մի նոր ու խոշոր հայ բանստեղծ։ (Որոշիչ ստորադաս նախադասություն)

Եթե, թե շաղկապներով կապակցված նախադասության ստորոգյալը վերածվում է անորոշ դերբայի սեռական հոլովի և կիրառվում *դեպքում* կապական բառով։ Այս դեպքում մենք ունենք պայմանի պարագա ստորադասական նախադասություն։ Օրինակ՝

Եթե նա իր խոստումը կատարի և պայմանավորված օրը իր զորքով հասնի մեզ օգնության, թշնամին չի կարողանա դիմադրել։ // Նրա՝ իր խոստումը կատարելու և պայմանավորված օրը իր զորքով մեզ օգնության հասնելու դեպքում թշնամին չի կարողանա դիմադրել։ (Պայմանի պարագա ստորադաս նախադասություն)

Թե շաղկապով ձևավորված ստորադասական նախադասությունը կարող է բնույթով լինել *ենթակա, ստորոգելի, ուղիղ խնդիր, անուղղակի խնդիր*, որոնց փոխակերպումը կատարվում է հարցերի հիման վրա։ Օրինակ՝

- Թվում է, թե հեռվից լսվում է մի թախծալի երգ։ (Թվում է **ի՞նչ** - ենթակա) // Թվում է հեռվից հեռվից մի թախծալի երգի լսվելը։
- Նա չէր վախենում, թե որևէ մեկը իրեն կնեղացնի։ (չէր վախենում **ինչի՞ց** –անջատման անուղղակի խնդիր) // Նա չէր վախենում որևէ մեկի՝ իրեն նեղացնելուց։

- Իշխանիկը չգիտեր, թե ինչով լցներ իր միայնությունը։ (**ի՞նչ** չգիտեր – ուղիղ խնդիր) // Իշխանիկը չգիտեր իր միայնությունն ինչով լցնելը։

Որովհետև, քանի որ շաղկապներով կապակցված ստորադասական նախադասության ստորոգյալը վերածվում է անորոշ դերբայի սեռական հոլովի և գործածվում *պատճառով* կապական բառով։ Օրինակ՝

Դավիթը կառավարչի ասածը չէր հասկանում, քանի որ չէր լսել խոսակցության սկիզբը։ // Դավիթը կառավարչի ասածը չէր հասկանում խոսակցության սկիզբը չլսելու պատճառով։

Հենց, հենց որ, թե չէ շաղկապներով կապակցված ստորադասական նախադասության ստորոգյալը վերածվում է անորոշ դերբայի տրական հոլովի և գործածվում *պես* կապով։ Պետք է նշենք, որ անորոշ դերբայի տրական հոլովաձևն անպայման պետք է կիրառվի **<u>ն</u>** որոշիչ հոդով։ Օրինակ՝

- Իր կոչը լսեցին թե չէ, հին ընկերներից մի քանիսը եկան։ // Իր կոչը լսելուն պես հին ընկերներից մի քանիսը եկան։
- Հենց որ դարպասները բացվեցին, գաղթականները առաջ նետվեցին։ // Դարպասները բացվելուն պես գաղթականները առաջ նետվեցին։

Բազմազան են **երբ** հարաբերական դերանունով ձևավորված ստորադասական նախադասության փոխակերպան տարբերակները։

1. Համակատար դերբայ
2. Անորոշ դերբայի սեռական հոլով + **ժամանակ** կապական բառ
3. Անորոշ դերբայի բացառական հոլով + **առաջ, հետո** կապեր
4. Անորոշ դերբայի գործիական հոլով

Բերենք համապատասխան օրինակներ՝

1. Այդպես հաճույքով վրնջում է ձին, երբ ախոռում տեսնում է ոսկեհատ գարին։ // Այդպես հաճույքով վրնջում է ձին ոսկեհատ գարին ախոռում տեսնելիս։

2. Երբ ձիավորները դուրս եկան վերջին ժայռի տակից, նրանց առջև երևաց բազմությամբ լի փոքրիկ հրապարակը։ // Ձիավորների՝ վերջին ժայռի տակից դուրս գալու ժամանակ նրանց առջև երևաց բազմոությամբ լի փոքրիկ հրապարակը։
3. Երբ մենք դուրս էինք եկել, նա իր մոր բարձի տակ գտնում է այդ դրամը։ // Մեր դուրս գալուց հետո նա իր մոր բարձի տակ գտնում է այդ դրամը։
4. Հայկական հեծելազորի ձիերը, երբ վազքի հոտ առան, սկսեցին վրնջալ, բորբոքվել։ // Հայկական հեծելազորի ձիերը, վազքի հոտ առնելով, սկսեցին վրնջալ, բորբոքվել։

Երբ-ով ձևավորված ստորադաս նախադասությունները կարող են լրացնել գերադաս նախադասության որևէ գոյական անդամի և դառնալ պարագայական բացահայտիչ կամ որոշիչ։ Վերջինիս դեպքում գերադաս նախադասության մեջ կարող է լինել **այն** հարաբերյալը։ Օրինակ՝

- Իրիկնադեմին, երբ անցնում էինք սարերը, մի անգամ էլ երևաց գյուղը։ // Իրիկնադեմին՝ սարերն անցնելիս, մի անգամ էլ երևաց գյուղը։ (պարագայական բացահայտիչ ստորադասական նախադասություն)
- Հիմա, երբ տարիների հեռավորությունից հիշում եմ նրան, պատկերանում է նա ինձ իմաստուն։ // Հիմա՝ տարիների հեռավորությունից նրան հիշելիս, պատկերանում է նա ինձ իմաստուն։ (պարագայական բացահայտիչ ստորադասական նախադասություն)
- Մենակության զգացումը գալիս է այն ժամանակ, երբ աշխարհում այլևս անելիք չի լինում։ // Մենակության զգացումը գալիս է աշխարհում այլևս անելիք չլինելու ժամանակ։ (որոշիչ ստորադասական նախադասություն)

Չնայած, չնայած որ, թեև շաղկապներով կապակցված ստորադասական նախադասության ստորոգյալը վերածվում է անորոշ դերբայի տրական հոլովի և գործածվում **հակառակ, չնայած** կապական բառերով։ Օրինակ՝

Թեև քսանհինգ տարեկան չկար, բայց հասցրել էր երկու անգամ ամուսնանալ և բաժանվել։ // Չնայած քսանհինգ տարեկան չլինելուն՝ հասցրել էր երկու անգամ ամուսնանալ և բաժանվել։

Այս շաղկապներով երկրորդական նախադասության ստորոգյալը կարող է փոխվել նաև անորոշ դերբայի գործիական հոլովի և գործածվել **հանդերձ** կապով։ Օրինակ՝

Չնայած որ մեր նպատակն արդար է, այնուամենայնիվ չենք կարողանում հաղթել։ // Մեր նպատակը արդար լինելով հանդերձ չենք կարողանում հաղթել։

7. Փոխակերպումը կատարելուց հետո դերբայական դարձվածը անհրաժեշտ է տեղադրել գերադաս նախադասության այն անդամի կողքին, որին լրացնում է, և կետադրել ըստ կարգի։

Նյութի բացատրության ընթացքում անհրաժեշտ է օգտագործել բնագրային պաստառներ կամ տեխնիկական միջոցներ։ Ցուցադրվում կամ գրատախտակին գրվում են մի քանի պարզ նախադասություններ, իսկ դրանց դիմաց նույն միտքն արտահայտվում է բարդ ստորադասական նախադասություններով։ Պահանջվում է սովորողներից պարզ նախադասությունները ենթարկել շարահյուսական ծավալուն վերլուծության, համեմատել պարզ և բարդ նախադասությունները՝ կիրառելով համեմատության հնարը, քանի որ միևնույն կամ տարբեր հատկանիշների առանձնացումը հնարավոր է դառնում միայն համեմատության միջոցով։

Կատարելով ուսոցչի կողմից տրված առաջադրանքը՝ սովորողները կռահում են, որ բարդ ստորադասական նախադասության մեջ պարզ նախադասության որևէ անդամ արտահայտված է ստորադաս նախադասությամբ։ Այնուհետև ուսուցիչը բացատրում է ստորադաս նախադասության շարահյուսական գործառույթը և հանձնարարում է պարզել, թե ստորադաս նախադասությունը գերադասի որ անդամին է փոխարինում։

Թեմայի ամրապնդումը և անդրադարձը կարելի է կատարել տարբեր առաջադրանքների միջոցով։ Գործադրելով քարտերի օգտագործման հնարը՝ սովորողներին նախօրոք բաժանում է բնագիր, առաջադրում է գտնել ստորադաս նախադասությունները, հարցադրման միջոցով պարզել դրանց շարահյուսական գործառույթները և բարդ ստորադասական նախադասությունները փոխակերպել պարզ նախադասությունների։ Աշակերտներն անցնում են ինքնուրույն աշխատանքի, իսկ ուսուցիչը հսկում և անհրժեշտության դեպքում ուղղություն է տալիս նրանց։

Եզրակացություն

Եթե ամփոփելու լինենք վերոշարադրյալը, ապա կնկատենք, որ հետևյալ շաղկապներով կապակցված երկրորդական նախադասությունները սովորաբար կատարում են որոշակի պաշտոններ և փոխակերպվելիս ձևավորվում են համապատասխան դերբայով և կապով: Այսպես՝

Որպեսզի, որ (նպատակի պարագա)……**ելու/ալու համար**

Քանի որ, որովհետև (պատճառի պարագա)……**ելու/ալու պատճառով**

Եթե, թե (պայմանի պարագա)……**ելու/ալու դեպքում**

Հենց որ, թե չէ (ժամանակի պարագա)……**ելուն/ալուն պես**

Մինչև որ, նախքան (ժամանակի պարագա)……**մինչև,նախքան ելը/ալը**

Որ, թե (ենթակա, ստորոգելի, խնդիրներ)……**ելը/ալը, ելուց/ալուց, ելով/ալով, ելուն/ալուն**

Իսկ հարաբերական դերանուններով կապակցված երկրորդական նախադասությունները փոխակերպելիս նկատում ենք այսպիսի օրինաչափություններ.

Այնպես….., ինչպես (ձևի պարագա) ……**ելու/ալու պես, ածի/ացածի պես**

Այնքան….., որքան (չափի պարագա) …… **ելու/ալու պես, ածի/ացածի չափ**

Այնտեղ….., որտեղ/ուր (տեղի պարագա) …… **ելու/ալու տեղը**

Նա….., ով (ենթակա) ……**ողը/ացողը, ածը/ացածը**

Նրանք….., ովքեր/որոնք (ենթակա)…….**ողները/ացողները, ածները/ացածները**

Նրանց….., ում (հատկացուցիչ) ……**ողի/ացողի, ասի/ացածի**

Այն….., ինչ/որի (ենթակա/խնդիր) ……**ելը/ալը, ողը/ացողը**

Այն ժամանակ….., երբ (ժամանակի պարագա)……**ելու/ալու ժամանակ**

Երբ (ժամանակի պարագա)…**ելիս/ալիս, ելու/ալու ժամանակ, ելուց/ալուց հետո**

Պետք է սակայն հավելել, որ ոչ բոլոր բարդ ստորադասական նախադասություններն են փոխակերպվում պարզ նախադասության։ Կան նաև փոխակերպման չենթարկվող բարդ ստորադասական նախադասություններ։ Չեն փոխկերպվում սովորաբար հետևանքի պարագա երկրորդական նախադասությունները, ինչպես նաև այն երկրորդական նախադասությունները, որոնք լրացնում են ոչ թե գլխավոր նախադասության որևէ անդամի, այլ ամբողջ նախադասությանը։ Օրինակ՝

- Նա մի քանի րոպե ուշացավ դասից, *որի պատճառով նկատողություն ստացավ*։
- Աղջիկը բաց արեց իր սենյակի լուսամուտները, *որից օդը փոքր ինչ զովացավ*։

Մի նկատառում ևս. ստորադասական նախադասությունները փոխակերպելիս միշտ չէ, որ ստացվում է դերբայական դարձված։ Այսպես օրինակ՝

- Ես չեմ ընդունում այն գաղափարները, *որոնք օտար են մեր ժողովրդին։* // Ես չեմ ընդունում *մեր ժողովրդին օտար գաղափարները*։

Կարելի է եզրակացնել, որ բարդ ստորադասական նախադասություններու փոխակերպելիս երկրորդական նախադասությունն ունենում է երեք տարբեր դրսևորումներ.

1. Դրանցից ամենատարածվածն այն է, որ երկրորդական նախադասությունը վերածվում է դերբայական դարձվածով որևէ անդամի։ Օրինակ՝ Ի՞նչ հպարտությամբ էր քայլում նա, *ով ձիու սանձն էր բռնել։*// Ի՞նչ հպարտությամբ էր քայլում *ձիու սանձը բռնողը։*
2. Երկրորդական նախադասությունը վերածվում է անվանական կամ կապային կապակցությամբ արտահայտված որևէ անդամի։ Օրինակ՝ Տղան հեռացավ այն երկրից, *որը լի էր թախիծով ու վշտով։* // Տղան հեռացավ *թախիծով ու վշտով լի* երկրից։
3. Երկրորդական նախադասությունը վերածվում է մեկ բառով արտահայտված դերբայի, որը դերբայական դարձված չէ։ Օրինակ՝ *Ինչ ասաց,* կատարվեց իսկույն։ // *Ասածը* կատարվեց իսկույն։ *Ով աշխատի*, նա կուտի։ // *Աշխատողը* կուտի։

Այսպիսով՝ ստորադաս նախադասության շարահյուսական գործառույթը ճիշտ որոշելու համար անհրաժեշտ է, որ աշակերտները կարողանան անսխալ որոշել և գտնել՝

1. գերադաս և ստորադաս նախադասությունները,

2. գերադաս նախադասության լրացյալ անդամի խոսքիմասային պատկանելությունը,
3. գերադաս նախադասության բայական անդամով արտահայտված լրացյալի սեռի, բայիմաստի հետ կապված հարցերը,
4. գերադաս նախադասոության մեջ եղած հարաբերյալի շարահյուսական գործառույթը,
5. գերադաս նախադասության ստորոգելին ինչ խոսքի մասով է արտահայտված (բաղադրյալ ստորոգյալ),
6. ստորադաս նախադասության բաղադրիչների բայով արտահայտված ստորոգյալների եղանակաժամանակային ձևերը,
7. գերադաս նախադասությունը միակազմ է, թե երկկազմ,
8. շարահարական կապակցությունների դեպքում կարևոր է շարադասությունը և հնչերանգը:

Ուսուցման նպատակը ոչ միայն գիտելիքների հաղորդումն է, դրանց յուրացումն աշակերտների կողմից, այլև այդ գիտելիքները կիրառելու հմտությունը: Այս տեսակետից կարևոր նշանակություն ունի գործնական աշխատանքի կատարումը, որը պետք է լինի բազմաձև և բազմաբնույթ. արդյունավետության տեսակետից կարևորություն են ստանում ընտրված բնագրերը և այն մեթոդներն ու մեթոդական հնարները, որոնք ուսուցչի կողմից կիրառվում են դասավանդման գործընթացում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ս. Աբրահամյան «Բայը ժամանակակից հայերենում», 1962թ.
2. Բ. Վերդյան «Բարդ ստորադասական նախադասության շարահյուսություն», «Լույս 1970»
3. Գ. Գարեգինյան «Շաղկապները ժամանակակից հայերենում», 1963թ.
4. Գ. Գարեգինյան «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1991թ.
5. Յու. Դավթյան «Հայոց լեզու: փոխակերպումներ», Երևան 2005թ.
6. Գ. Ջահուկյան «Ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքները», Երևան 1974թ.